

Խորհրդի 2000 թվականի հունիսի 29-ի 2000/43/ԵՀ հրահանգ

Անկախ ռասայական և էթնիկական ծագումից՝ անձանց նկատմամբ հավասար վերաբերմունքի սկզբունքը կիրառելու մասին

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ,

հաշվի առնելով «Եվրոպական համայնքի հիմնադրման մասին» պայմանագիրը և, մասնավորապես, դրա 13-րդ հոդվածը,

հաշվի առնելով Հանձնաժողովից ստացված առաջարկը (1),

հաշվի առնելով Եվրոպական պառլամենտի եզրակացությունը (2),

հաշվի առնելով Տնտեսական և սոցիալական հարցերով կոմիտեի եզրակացությունը (3),

հաշվի առնելով Տարածաշրջանների հարցերով կոմիտեի եզրակացությունը (4),

Քանի որ

1) «Եվրոպական միության մասին» պայմանագրով Եվրոպայի ժողովուրդների միջև առավել սերտ միություն ստեղծելու գործընթացում նշանավորվում է մի նոր փուլ,

2) «Եվրոպական միության մասին» պայմանագրի 6-րդ հոդվածի համաձայն՝ Եվրոպական միությունը հիմնվում է ազատության, ժողովրդավարության, մարդու իրավունքների և հիմնարար ազատությունները հարգելու սկզբունքների ու օրենքի գերակայության վրա՝ սկզբունքներ, որոնք ընդհանուր են անդամ պետությունների համար, և Եվրոպական միությունը պետք է հարգի «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայով երաշխավորված հիմնարար իրավունքները, և քանի որ դրանք, որպես Համայնքի իրավունքի ընդհանուր սկզբունքներ, բխում են անդամ պետությունների համար ընդհանուր սահմանադրական ավանդույթներից,

3) օրենքի առաջ հավասարության և խտրականության դեմ բոլոր անձանց պաշտպանության իրավունքը համընդհանուր իրավունք է, որը ճանաչված է «Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրով», «Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայով, «Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» միջազգային կոնվենցիայով, «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» ու «Տնտեսական, սոցիալական, մշակութային

իրավունքների մասին» ՄԱԿ-ի դաշնագրերով և «Մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիայով, որոնք ստորագրված են բոլոր անդամ պետությունների կողմից,

4) կարևոր է հարգել նման հիմնարար իրավունքներն ու ազատությունները՝ ներառյալ միավորումներ կազմելու ազատությունը: Կարևոր է նաև ապրանքների և ծառայությունների մատչելիության և տրամադրման համատեքստում հարգել մասնավոր ու ընտանեկան կյանքի պաշտպանության իրավունքը և այս համատեքստում իրականացվող գործողությունները,

5) Եվրոպական պառլամենտն ընդունել է մի շարք բանաձևեր՝ Եվրոպական միությունում ռասայական խտրականության դեմ պայքարի մասին,

6) Եվրոպական միությունը մերժում է առանձին մարդկային ռասաների գոյությունը տարբերակող տեսությունները: Սույն Հրահանգում «ռասայական ծագում» եզրույթի կիրառությունը չի ենթադրում, որ նման տեսություններն ընդունելի են,

7) 1999 թվականի հոկտեմբերի 15-ին և 16-ին Տամպերեում Եվրոպական խորհուրդը Հանձնաժողովին կոչ արեց հնարավորինս շուտ հանդես գալ այնպիսի առաջարկներով, որոնցով գործողության մեջ կդրվեն ԵՀ պայմանագրի՝ ռասայական խտրականության և օտարատյացության դեմ պայքարի վերաբերյալ 13-րդ հոդվածը,

8) 1999 թվականի դեկտեմբերի 10-ին և 11-ին Հելսինկիում Եվրոպական Խորհրդի կողմից ընդունված «Աշխատանքի ընդունման ուղեցույց 2000»-ում շեշտվում է սոցիալական տարբեր խավեր ներառող աշխատանքային շուկայի համար պայմաններ խթանելու անհրաժեշտությունը՝ հետևողական քաղաքականությունների մշակման միջոցով, որոնք ուղղված կլինեն որոշակի խմբերի, ինչպես, օրինակ՝ էթնիկական փոքրամասնությունների նկատմամբ խտրականության դեմ պայքարին,

9) ռասայական կամ էթնիկական ծագման հիման վրա դրսևորվող խտրականությունը կարող է վտանգել ԵՀ պայմանագրի նպատակների իրականացումը, մասնավորապես, զբաղվածության ու սոցիալական պաշտպանվածության բարձր մակարդակ ապահովելը, կենսապայմանների ու կյանքի որակի բարելավումը, տնտեսական և սոցիալական համախմբվածությունն ու համերաշխությունը: Այն նաև կարող է վտանգել Եվրոպական Միությունը ազատության, անվտանգության և արդարադատության տարածք դարձնելու նպատակը,

10) Հանձնաժողովը 1995 թվականի դեկտեմբերին հաղորդագրություն է ներկայացրել ռասայական խտրականության, օտարատյացության և հակահրեականության (անտիսեմիտիզմ) մասին,

11) Խորհուրդը 1996 թվականի հուլիսի 15-ին ընդունեց «Ռասայական խտրականության և օտարատյացության դեմ պայքարին ուղղված գործողությունների մասին» համատեղ գործողության փաստաթուղթ (96/443/ԱՆԳ) (5), որի համաձայն, անդամ պետությունները քայլեր են ձեռնարկում՝ ցեղապաշտական (ռասիստական) և օտարատյաց վարքագծի հիման վրա կատարված հանցանքների մասով արդյունավետ դատական համագործակցություն ապահովելու նպատակով,

12) անկախ ռասայական և էթնիկական ծագումից՝ բոլոր անձանց մասնակցությունն ապահովող ժողովրդավարական և հանդուրժողական հասարակության ձևավորումն ապահովելու նպատակով՝ այն կոնկրետ գործողությունները, որոնք վերաբերում են ռասայական և էթնիկական ծագման հիմքով խտրականությանը, չպետք է սահմանափակվեն զբաղվածության և ինքնազբաղվածության մատչելիությանն ուղղված գործողություններով, և պետք է ընդգրկեն այնպիսի բնագավառներ, ինչպիսիք են՝ կրթությունը, սոցիալական պաշտպանվածությունը՝ ներառյալ սոցիալական ապահովությունը և առողջապահությունը, սոցիալական առավելությունների համակարգն ու ապրանքների մատակարարումը և ծառայությունների մատուցումն ու դրանց հասանելիությունը,

13) այդ նպատակով, ռասայական և էթնիկական ծագման հիման վրա ցանկացած ուղղակի և անուղղակի խտրականություն պետք է արգելվի Համայնքի ամբողջ տարածքում՝ սույն Հրահանգի կարգավորման ոլորտներում: Խտրականության նման արգելքը պետք է նաև կիրառվի երրորդ երկրների քաղաքացիների նկատմամբ, սակայն այդ արգելքով չեն կարգավորվում ազգային պատկանելության հիմքով վերաբերմունքի տարբերությունները՝ չհակասելով երրորդ երկրների քաղաքացիների մուտքի և բնակության, ինչպես նաև նրանց աշխատանքի ու զբաղվածության պայմանները կարգավորող դրույթներին,

14) անկախ ռասայական և էթնիկական ծագումից՝ հավասար վերաբերմունքի սկզբունքը կիրառելիս Համայնքը, ԵՀ Պայմանագրի 3(2) հոդվածի համաձայն, նպատակ ունի վերացնելու անհավասարությունները և խթանելու կանանց ու տղամարդկանց միջև հավասարությունը, հատկապես քանի որ կանայք հաճախ բազմակի խտրականությունների զոհ են դառնում,

15) այն փաստերի գնահատումը, որոնց հիման վրա կարելի է եզրակացնել, թե արդյոք տեղի է ունեցել ուղղակի կամ անուղղակի խտրականություն, պետք է կատարվի ազգային դատական կամ այլ իրավասու մարմինների կողմից՝ ազգային իրավունքի և գործելակերպի կանոնների համաձայն: Նման կանոններով կարող է սահմանվել, որ, մասնավորապես, անուղղակի խտրականությունը կարող է հաստատվել ցանկացած միջոցով, այդ թվում՝ վիճակագրական փաստերի հիման վրա,

16) կարևոր է բոլոր ֆիզիկական անձանց պաշտպանել ռասայական և էթնիկական ծագման հիման վրա խտրականությունից: Անհրաժեշտության դեպքում և իրենց ազգային ավանդույթների ու գործելակերպի համաձայն՝ անդամ պետությունները պետք է նաև ապահովեն իրավաբանական անձանց պաշտպանությունն այն դեպքերում, երբ նրանք ենթարկվում են խտրականության իրենց անդամների ռասայական և էթնիկական ծագման պատճառով,

17) խտրականության արգելքը չպետք է հակասի այնպիսի միջոցների ընդունմանն ու պահպանմանը, որոնք նպատակ ունեն կանխարգելելու կամ փոխհատուցելու որոշակի ռասայական կամ էթնիկական խմբի անձանց կրած վնասները, և նման միջոցներով կարող է թույլատրվել որոշակի ռասայական կամ էթնիկական ծագման անձանց կազմակերպությունների ստեղծումն այն դեպքերում, երբ դրանց հիմնական նպատակն այդ անձանց կոնկրետ կարիքները խթանելն է,

18) որոշ սահմանափակ թվով հանգամանքներում վերաբերմունքի տարբերությունը կարող է արդարացված լինել, եթե ռասայական կամ էթնիկական ծագման բնութագիրն իսկական և որոշիչ մասնագիտական պահանջ է, երբ նպատակն օրինական է, իսկ պահանջը՝ համաչափ: Նման հանգամանքները պետք է ընդգրկվեն այն տեղեկությունների մեջ, որոնք անդամ պետությունների կողմից տրամադրվում են Հանձնաժողովին,

19) ռասայական կամ էթնիկական ծագման հիման վրա խտրականության ենթարկված անձինք պետք է օգտվեն իրավական պաշտպանության համապատասխան միջոցներից: Առավել արդյունավետ մակարդակով պաշտպանություն ապահովելու համար միավորումները և իրավաբանական անձինք, անդամ պետությունների որոշման համաձայն, պետք է իրավասություն ունենան զոհի անունից կամ նրան աջակցելու համար ներգրավվել դատական վարույթներում՝ չխախտելով դատարանում ներկայացուցչությանն ու պաշտպանությանը վերաբերող ազգային ընթացակարգային կանոնները,

20) հավասարության սկզբունքի արդյունավետ կիրարկման համար պահանջվում է հետապնդումների դեմ ապահովել համապատասխան դատական պաշտպանություն,

21) ապացուցման պարտականության կանոնները պետք է փոփոխվեն այն դեպքերում, երբ առերևույթ (*prima facie*) խտրականության դեպք է առկա և, որպեսզի հավասարության սկզբունքն արդյունավետ կիրառվի, ապացուցման պարտականությունը պետք է կրի պատասխանողը, երբ նման խտրականության ապացույց է ներկայացվում,

22) անդամ պետությունները կարող են չկիրառել ապացուցման պարտականության կանոններն այն վարույթներում, որոնց դեպքում գործի փաստերը պետք է ուսումնասիրվեն դատարանի կամ մեկ այլ իրավասու մարմնի կողմից: Նշված ընթացակարգերն այն ընթացակարգերն են, որոնց ժամանակ հայցվորից չի պահանջվում ապացուցել փաստերն այն դեպքերում, երբ դրանք պետք է քննվեն դատարանի կամ այլ իրավասու մարմնի կողմից,

23) անդամ պետությունները պետք է խթանեն երկխոսությունը սոցիալական գործընկերների և հասարակական կազմակերպությունների միջև, որպեսզի դրանք անդրադառնան խտրականության տարբեր ձևերին և պայքարեն դրանց դեմ,

24) ռասայական և էթնիկական ծագման հիմքով խտրականության դեմ պաշտպանությունն ինքնին կամրապնդվի անդամ պետությունում այնպիսի մարմնի կամ մարմինների գոյության շնորհիվ, որոնք իրավասություն կունենան վերլուծելու խնդիրները, ուսումնասիրելու հնարավոր լուծումները և կոնկրետ օժանդակություն տրամադրելու զոհերին,

25) սույն Հրահանգով սահմանվում են նվազագույն պահանջներ՝ դրանով իսկ հնարավորություն տալով անդամ պետություններին ներմուծելու կամ պահպանելու առավել բարենպաստ դրույթները: Սույն Հրահանգի կիրարկումը չպետք է ծառայի՝ արդարացնելու որևէ հետընթաց այն իրավիճակի մասով, որն արդեն առկա է յուրաքանչյուր անդամ պետությունում,

26) անդամ պետությունները սույն Հրահանգով սահմանված պարտավորությունների խախտման դեպքում պետք է նախատեսեն արդյունավետ, համաչափ և տարհամոզիչ պատժամիջոցներ,

27) անդամ պետությունները կարող են, ղեկավար մարմինների և աշխատողների համատեղ դիմումի հիման վրա, նրանց հանձնարարել սույն Հրահանգի կիրարկումն այն դրույթների մասով, որոնք վերաբերում են կոլեկտիվ պայմանագրերի գործողության շրջանակին՝

պայմանով, որ անդամ պետություններն անհրաժեշտ քայլեր ձեռնարկեն՝ ապահովելու համար, որ իրենք կարող են մշտապես երաշխավորել սույն Հրահանգով նախատեսված արդյունքները,

28) ԵՀ Պայմանագրի 5-րդ հոդվածով սահմանված սուբսիդիարության և համաչափության սկզբունքների համաձայն՝ սույն Հրահանգի նպատակը՝ բոլոր անդամ պետություններում խտրականության դեմ համընդհանուր բարձր մակարդակով պաշտպանություն ապահովելը, հնարավոր չէ բավարար չափով իրականացնել անդամ պետությունների մակարդակով և, հետևաբար, կարող է առավել լավ իրականացվել Համայնքի կողմից՝ հաշվի առնելով առաջարկվող միջոցառումների ծավալը և ազդեցությունը: Սույն Հրահանգով սահմանվում են միայն այն միջոցները, որոնք անհրաժեշտ են այդ նպատակներն իրականացնելու համար,

ԸՆԴՈՒՆԵՑ ՍՈՒՅՆ ՀՐԱՀԱՆԳԸ.

ԳԼՈՒԽ I

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 1

Նպատակը

Սույն Հրահանգի նպատակը ռասայական և էթնիկական ծագման հիման վրա խտրականության դեմ պայքարելու համար անհրաժեշտ շրջանակը սահմանելն է՝ անդամ պետություններում հավասար վերաբերմունքի սկզբունքը կիրառելու նպատակով:

Հոդված 2

խտրականության հասկացությունը

1. Սույն Հրահանգի իմաստով՝ հավասար վերաբերմունքի սկզբունքն ենթադրում է, որ ռասայական և էթնիկական ծագման հիմքով ուղղակի կամ անուղղակի որևէ խտրականություն պետք է բացառվի:

2. 1-ին պարբերության իմաստով՝

ա) ուղղակի խտրականության դրսևորման դեպք է համարվում այն դեպքը, երբ որևէ անձի նկատմամբ, ռասայական կամ էթնիկական ծագման հիման վրա, ցուցաբերվել է ավելի վատ վերաբերմունք, քան այն վերաբերմունքը, որը նմանատիպ իրավիճակում ցուցաբերվել է, ցուցաբերվում է կամ կցուցաբերվեր մեկ այլ անձի նկատմամբ,

բ) անուղղակի խտրականության դրսևորման դեպք է համարվում այն դեպքը, երբ ակնհայտ չեզոք դրույթը, չափանիշը կամ գործելակերպը կարող է որևէ ռասայական և էթնիկական ծագմամբ անձանց համար որոշակի անշահավետ պայմաններ ստեղծել՝ այլ անձանց համեմատ, եթե միայն այդ դրույթը, չափանիշը կամ գործելակերպն օբյեկտիվորեն արդարացված չեն որևէ օրինական նպատակի համար, և եթե այդ նպատակին հասնելու միջոցները նպատակահարմար են ու անհրաժեշտ:

3. Հետապնդումը համարվում է խտրականություն՝ 1-ին պարբերության իմաստով, եթե դրսևորվում է ռասայական կամ էթնիկական ծագման հետ կապված անցանկալի պահվածք, որի նպատակը անձի արժանապատվությունը վիրավորելը կամ ահաբեկող, թշնամական, ստորացնող, նվաստացնող և վիրավորական մթնոլորտ ստեղծելն է, կամ որը նման ազդեցություն է ունեցել: Այս համատեքստում «հետապնդում» հասկացողությունը կարող է սահմանվել՝ անդամ պետությունների ազգային իրավական համակարգին և գործելակերպին համապատասխան:

4. Ռասայական և էթնիկական ծագման հիման վրա մարդկանց նկատմամբ խտրականություն դրսևորելու հրահանգը համարվում է խտրականություն՝ 1-ին պարբերության իմաստով:

Հոդված 3

Գործողության շրջանակը

1. Համայնքին վերապահված լիազորությունների շրջանակում սույն Հրահանգը կիրառվում է մասնավոր և պետական հատվածներում բոլոր անձանց՝ ներառյալ պետական մարմինների նկատմամբ՝ կապված հետևյալի հետ.

ա) աշխատանքի, ինքնազբաղվածության և զբաղվածության հնարավորության պայմաններ՝ ներառյալ ընտրության չափանիշները և աշխատանքի ընդունման պայմանները՝ գործունեության ցանկացած ոլորտում և մասնագիտական պաշտոնակարգության ցանկացած մակարդակում, այդ թվում՝ առաջխաղացումը,

բ) բոլոր տեսակի և բոլոր մակարդակներում մասնագիտական կրթության, մասնագիտական վերապատրաստման, խորացված մասնագիտական վերապատրաստման և կրկնակի վերապատրաստման, այդ թվում՝ գործնական աշխատանքային փորձի հնարավորություն,

գ) աշխատանք և աշխատանքային պայմաններ՝ ներառյալ աշխատանքից ազատելը և վարձատրությունը,

դ) աշխատողների կամ գործատուների կամ որևէ այլ կազմակերպության անդամություն և մասնակցություն, որի անդամներն իրականացնում են որոշակի մասնագիտական գործունեություն՝ ներառյալ նման կազմակերպությունների կողմից նախատեսված արտոնությունները,

ե) սոցիալական պաշտպանվածություն՝ ներառյալ սոցիալական ապահովությունն ու առողջապահությունը,

զ) սոցիալական առավելություններ,

է) կրթություն,

ը) հանրության համար մատչելի ապրանքների և ծառայություններից օգտվելու հնարավորություն և դրանց տրամադրում՝ ներառյալ բնակարանի մատչելիությունն ու տրամադրումը:

2. Սույն Հրահանգով չի կարգավորվում ազգության հիման վրա տարբերակված վերաբերմունքի կիրառումը և այն չի հակասում անդամ պետությունների տարածքում երրորդ երկրների քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց մուտքին ու բնակությանը վերաբերող դրույթներին և պայմաններին, ինչպես նաև երրորդ երկրների քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց իրավական կարգավիճակից բխող որևէ վերաբերմունքին:

Հոդված 4

Իրական և որոշիչ մասնագիտական պահանջները

Չհակասելով 2(1) և (2) հոդվածներին՝ անդամ պետությունները կարող են նախատեսել, որ ռասայական և էթնիկական ծագման առանձնահատկության հիման վրա տարբերակված վերաբերմունքը չի համարվում խտրականություն, եթե այդ առանձնահատկությունը ներկայացնում է իրական և որոշիչ մասնագիտական պահանջ՝ ելնելով որոշակի

մասնագիտական գործունեության բնույթից կամ այն համատեքստից, որում այն իրականացվում է՝ պայմանով, որ նպատակը լինի իրավաչափ, իսկ պահանջը՝ համապատասխան:

Հոդված 5

Դրական գործողությունը

Գործնականում ամբողջական հավասարություն ապահովելու նպատակով՝ հավասար վերաբերմունքի սկզբունքը չի խոչընդոտում որևէ անդամ պետությանը պահպանել կամ ձեռնարկել կոնկրետ միջոցներ, որոնց նպատակը ռասայական կամ էթնիկական ծագման հետ կապված վնասները կանխելը կամ փոխհատուցելն է :

Հոդված 6

Նվազագույն պահանջները

1. Անդամ պետությունները կարող են ներմուծել կամ պահպանել այնպիսի դրույթներ, որոնք առավել նպատակահարմար են հավասար վերաբերմունքի սկզբունքի պաշտպանության առումով, քան սույն Հրահանգով սահմանված դրույթները:

2. Սույն Հրահանգի կիրարկումը ոչ մի դեպքում հիմք չէ՝ նվազեցնելու խտրականության դեմ պաշտպանության այն մակարդակը, որն արդեն կա անդամ պետություններում սույն Հրահանգով կարգավորվող ոլորտներում:

ԳԼՈՒԽ II

ԻՐԱՎԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՊԱՐՏԱԴԻՐ ԿԱՏԱՐՈՒՄԸ

Հոդված 7

Իրավունքների պաշտպանությունը

1. Անդամ պետություններն ապահովում են, որ սույն Հրահանգով սահմանված պարտավորությունների պարտադիր կատարման համար դատական և (կամ) վարչական

ընթացակարգերը՝ ներառյալ, անհրաժեշտության դեպքում, հաշտեցման ընթացակարգերը, մատչելի լինեն այն անձանց համար, ովքեր համարում են, որ իրենք տուժել են հավասարության սկզբունքն իրենց նկատմամբ չկիրառելու հետևանքով, նույնիսկ եթե այն հարաբերությունը, որի ընթացքում ենթադրյալ խտրականությունը դրսևորվել է, դադարեցվել է:

2. Անդամ պետություններն ապահովում են, որ այն միավորումները, կազմակերպությունները կամ այլ իրավաբանական անձինք, ովքեր իրենց ազգային իրավունքի չափանիշների համաձայն, օրինական շահ ունեն սույն Հրահանգի դրույթների իրականացման հետ կապված, կարողանան մասնակցել սույն Հրահանգի համաձայն պարտականությունների կատարման համար սահմանված ցանկացած դատական և (կամ) վարչական վարույթին՝ հայցվորի անունից կամ նրա կողմից՝ վերջինիս թույլտվությունն ստանալու դեպքում:

3. 1-ին և 2-րդ պարբերությունները չեն հակասում ազգային այն կանոններին, որոնք վերաբերում են հավասար վերաբերմունքի սկզբունքին առնչվող հայցեր ներկայացնելու ժամանակային սահմանափակմանը:

Հոդված 8

Ապացուցման պարտականությունը

1. Անդամ պետությունները ձեռնարկում են անհրաժեշտ միջոցներ, որոնք, իրենց ազգային դատական համակարգերի համաձայն, անհրաժեշտ են՝ ապահովելու համար, որ պատասխանողն ապացուցի հավասար վերաբերմունքի սկզբունքի խախտման բացակայությունն այն դեպքերում, երբ այն անձինք, ովքեր համարում են, որ տուժել են հավասար վերաբերմունքի սկզբունքն իրենց նկատմամբ չկիրառելու հետևանքով, դատարանին կամ իրավասու այլ մարմին ներկայացնում են այնպիսի փաստեր, որոնցով կարելի է ապացուցել ուղղակի կամ անուղղակի խտրականության դրսևորումը:

2. 1-ին պարբերությունը չի խոչընդոտում անդամ պետություններին ներմուծելու հայցվորի համար առավել բարենպաստ ապացուցողական իրավունքի նորմեր:

3. 1-ին պարբերությունը չի կիրառվում քրեական վարույթների նկատմամբ:

4. 1-ին, 2-րդ և 3-րդ պարբերությունները կիրառվում նաև ցանկացած վարույթի նկատմամբ, որը հարուցվել է՝ 7(2) հոդվածի համաձայն:

5. Անդամ պետությունները կարող են չկիրառել 1-ին պարբերությունը այն վարույթների նկատմամբ, որոնց դեպքում գործի փաստերը պետք է ուսումնասիրվեն դատարանի կամ իրավասու մարմնի կողմից:

Հոդված 9

Հետապնդումը

Անդամ պետություններն իրենց ազգային իրավական համակարգերում ներմուծում են այնպիսի միջոցներ, որոնք անհրաժեշտ են մարդկանց թշնամական վերաբերմունքից կամ անբարենպաստ հետևանքներից պաշտպանելու համար, որոնք կարող են դրսևորվել ի պատասխան բողոքի կամ հավասար վերաբերմունքի սկզբունքի կատարման նպատակ հետապնդող վարույթների:

Հոդված 10

Տեղեկությունների տարածումը

Անդամ պետությունները ձեռնարկում են միջոցներ՝ սույն Հրահանգի համաձայն ընդունված դրույթները, արդեն գործող համապատասխան դրույթների հետ միասին, իրենց պետության ամբողջ տարածքում բոլոր համապատասխան միջոցներով շահագրգիռ անձանց ուշադրությանը ներկայացնելու համար:

Հոդված 11

Սոցիալական երկխոսությունը

1. Ազգային ավանդույթներին և գործելակերպին համապատասխան՝ անդամ պետությունները ձեռնարկում են երկու կողմերի միջև սոցիալական երկխոսություն խրախուսելուն ուղղված համապատասխան միջոցներ՝ նպատակ ունենալով խթանելու հավասար վերաբերմունքը՝ ներառյալ աշխատավայրում ընդունված գործելակերպի,

կոլեկտիվ համաձայնագրերը, վարքագծի կանոնագրքերը դիտանցելու, փորձը և լավագույն գործելակերպն ուսումնասիրելու կամ փոխանակելու միջոցով:

2. Անդամ պետությունները խրախուսում են երկու կողմերին, չսահմանափակելով իրենց անկախությունը, համապատասխան մակարդակով կնքել խտրականության բացառմանն ուղղված կանոններ սահմանող համաձայնագրեր 3-րդ հոդվածով նշված ոլորտներում, որոնք գտնվում են կոլեկտիվ սակարկության շրջանակում, եթե դա չի հակասում ազգային ավանդույթներին և գործելակերպին: Այս համաձայնագրերը պահպանում են սույն Հրահանգով և կիրառվող համապատասխան ազգային միջոցներով սահմանված նվազագույն պահանջները:

Հոդված 12

Հասարակական կազմակերպությունների հետ երկխոսությունը

Անդամ պետությունները խրախուսում են երկխոսությունը համապատասխան հասարակական կազմակերպությունների հետ, որոնք, ազգային իրավունքի և գործելակերպի համաձայն, օրինական շահ ունեն ռասայական և էթնիկական ծագման հիման վրա խտրականության դեմ պայքարին նպաստելու հարցում՝ նպատակ ունենալով խթանելու հավասար վերաբերմունքի սկզբունքը:

ԳԼՈՒԽ III

ՀԱՎԱՍԱՐ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԸ ԽԹԱՆՈՂ ՄԱՐՄԻՆՆԵՐ

Հոդված 13

1. Անդամ պետությունները նշանակում են մարմին կամ մարմիններ՝ խթանելու համար բոլոր անձանց նկատմամբ հավասար վերաբերմունքը՝ առանց ռասայական կամ էթնիկական ծագման հիման վրա խտրականության: Այս մարմինները կարող են ներկայացնել ազգային մակարդակով մարդու իրավունքների կամ անհատի իրավունքների պաշտպանության պարտականություններով օժտված գործակալությունները:

2. Անդամ պետություններն ապահովում են, որ նման մարմիններն ունենան հետևյալ իրավասությունները՝

- չխախտելով զոհերի և 7(2) հոդվածում նշված այն միավորումների, կազմակերպությունների և այլ իրավաբանական անձանց իրավունքները, որոնք անկախ օժանդակություն են ցուցաբերում խտրականության զոհերին՝ խտրականության վերաբերյալ իրենց բողոքները ներկայացնելու հարցում,
- խտրականությանը վերաբերող անկախ հարցումների անցկացում,
- անկախ հաշվետվությունների հրապարակում և նման խտրականությանը վերաբերող հարցերով առաջարկների ներկայացում:

ԳԼՈՒԽ IV

ԵԶՐԱՓՈՒԿ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 14

Հրահանգին համապատասխանելը

Անդամ պետությունները ձեռնարկում են անհրաժեշտ միջոցներ՝ ապահովելու համար, որ՝

ա) հավասար վերաբերմունքի սկզբունքին հակասող բոլոր իրավական նորմերը, կանոնակարգերն ու վարչական ակտերը չեղյալ հայտարարվեն,

բ) հավասար վերաբերմունքի սկզբունքին հակասող բոլոր դրույթները, որոնք ընդգրկված են անհատական կամ կոլեկտիվ պայմանագրերում, ձեռնարկությունների ներքին կանոնակարգերում, շահույթ հետապնդող և չհետապնդող միավորումների կանոնակարգերում ու անկախ մասնագիտական և աշխատողների կազմակերպությունների կանոնակարգերում, հայտարարվեն առոչինչ կամ ենթարկվեն փոփոխությունների:

Հոդված 15

Պատժամիջոցները

Անդամ պետությունները սահմանում են սույն Հրահանգի համաձայն ընդունված ազգային դրույթների խախտման դեպքում կիրառվող պատժամիջոցների վերաբերյալ կանոնները և ձեռնարկում են բոլոր անհրաժեշտ քայլերը՝ դրանք գործողության մեջ դնելու համար: Այն պատժամիջոցները, որոնք կարող են ներառել դրամական փոխհատուցում տուժողին, պետք է լինեն արդյունավետ, համաչափ և տարհամոզիչ: Անդամ պետությունները տեղեկացնում են Հանձնաժողովին այս դրույթների մասին՝ ամենաուշը մինչև 2003 թվականի հուլիսի 19-ը, ինչպես նաև անհապաղ տեղեկացնում են հետագա ցանկացած փոփոխության մասին:

Հոդված 16

Իրականացումը

Անդամ պետություններն ընդունում են սույն Հրահանգի իրականացման համար անհրաժեշտ իրավական նորմերը, կանոնակարգերն ու վարչական ակտերը՝ մինչև 2003 թվականի հուլիսի 19-ը կամ կարող են, ղեկավար մարմինների և աշխատողների համատեղ դիմումի հիման վրա, նրանց հանձնարարել սույն Հրահանգի կիրարկումը կոլեկտիվ համաձայնագրերի շրջանակում ընդգրկված դրույթների մասով: Անդամ պետությունները նման դեպքերում ապահովում են, որ մինչև 2003 թվականի հուլիսի 19-ը ղեկավար մարմինները և աշխատողները ներմուծեն պայմանագրով սահմանված անհրաժեշտ միջոցները, իսկ անդամ պետություններից պահանջվում է, որ նրանք անհրաժեշտ քայլեր ձեռնարկեն, որպեսզի ղեկավարությունն ու աշխատողները ցանկացած պահի կարողանան երաշխավորել սույն Հրահանգով նախատեսված արդյունքները: Նրանք դրա մասին անմիջապես տեղեկացնում են Հանձնաժողովին:

Երբ անդամ պետություններն ընդունում են այդ ակտերը, դրանք պետք է հղում պարունակեն սույն Հրահանգին կամ ուղեկցվեն նման հղումով՝ դրանց պաշտոնական հրապարակման պահին: Նման հղում կատարելու եղանակները սահմանվում են անդամ պետությունների կողմից:

Հոդված 17

Հաշվետվությունը

1. Մինչև 2005 թվականի հուլիսի 19-ը և դրանից հետո՝ յուրաքանչյուր հինգ տարին մեկ անգամ, անդամ պետությունները Հանձնաժողովին են փոխանցում այն բոլոր տեղեկությունները, որոնք անհրաժեշտ են Հանձնաժողովին՝ սույն Հրահանգի կիրարկման վերաբերյալ Եվրոպական պառլամենտին և Խորհրդին ուղղված զեկույց կազմելու համար:

2. Անհրաժեշտության դեպքում, Հանձնաժողովի զեկույցի համար հաշվի են առնվում Ռասայական խտրականության և օտարաոյացության դիտանցման եվրոպական կենտրոնի, ինչպես նաև սոցիալական գործընկերների ու համապատասխան հասարակական կազմակերպությունների կարծիքները: Համաձայն «գենդերային իրավահավասարությունը՝ որպես քաղաքականության գլխավոր ուղղություն» սկզբունքի՝ այդ զեկույցում, մասնավորապես, գնահատվում է այդ միջոցների ազդեցությունը կանանց և տղամարդկանց վրա: Հաշվի առնելով ստացված տեղեկությունները՝ այս զեկույցը, անհրաժեշտության դեպքում, ներառում է սույն Հրահանգի վերանայմանն ու արդիականացմանը վերաբերող առաջարկներ:

Հոդված 18

Ուժի մեջ մտնելը

Սույն Հրահանգն ուժի մեջ է մտնում Եվրոպական համայնքների պաշտոնական տեղեկագրում հրապարակվելու օրը:

Հոդված 19

Հասցեատերերը

Սույն Հրահանգը հասցեագրված է անդամ պետություններին:

Կատարված է Լյուքսեմբուրգում 2000 թվականի հունիսի 29-ին: